ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԱԼԵՍԱ ՄԻՍԱԿԻ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ «ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ» ԹԵՄԱՅՈՎ, ԺԳ.00.01 – «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ և ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Վերջին տասնամյակում ներկայացված ատենախոսության թեման դարձել է չափազանց արդիական, ինչը պայմանավորված է ինչպես թվային տեխնոլոգիաների լայն կիրառմամբ կրթական համակարգում, այնպես էլ համաշխարհային կրթական շուկայի զարգացմամբ: Ուսուցիչների մասնագիտական կարողությունների արդիականացումը ներկայումս հնարավոր է կազմակերպել ոչ միայն ավանդական առերես դասընթացներով, այլ նաև տարբեր առցանց հարթակների միջոցով: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև հետևյալ հանգամանքներով.

- COVID-19 համավարակի հետևանքով հեռավար ուսուցման արագ տարածումը և դրական արդյունքները,
- թվային կրթական հմտությունների նկատմամբ աճող պահանջարկը,
- միջազգային փորձը, որը փաստում է, որ արդյունավետ առցանց վերապատրաստումները մեծացնում են ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման հնարավորությունները:

Չնայած առցանց հարթակների միջոցով ուսուցիչների վերապատրաստման պահանջարկի աճին դեռևս լիարժեք մշակված չեն դրանց արդյունավետ իրականացման համակարգերը, մեթոդական մոտեցումները և արդյունավետության գնահատման մեխանիզմները: Այս հանգամանքներն են առավել ընդգծում ներկայիս ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածներից:

Առաջին գլխում ատենախոսը ներկայացրել է վերապատրաստումների ընդհանուր բնութագիրը և դրանց վերաբերյալ գիտական մոտեցումները: Այստեղ ընդգծվել են ուսուցիչների վերապատրաստման օրենսդրական հիմքերը, ներկայացվել են վերապատրաստումների տեսակները: Ա. Դուրգարյանը համեմատել է հայրենական և միջազգային կրթական համակարգերում ուսուցիչների վերապատրաստման

գործընթացները՝ առանձնացնելով առկա խնդիրները, ընդհանրություններն ու տարբերությունները: Ուշադրության են արժանի հետևյալ հարցադրումները.

- ուսուցիչների վերապատրաստման նպատակային մոդելի ձևավորում (ով է «արդի» ուսուցիչը),
- վերապատրաստման ձևերի և մեթոդների ճիշտ ընտրություն և հիմնավորում:

Գլխում ներկայացված են նաև ուսուցիչների վերապատրաստման նորարարական մոտեցումները.

- վերապատրաստման ծրագրերի մշակում՝ փոփոխված չափորոշիչներին համապատասխան,
- խմբի և դասավանդողի հաղորդակցման ձևեր,
- տեսական գիտելիքների գործնական կիրառման ապահովում,
- վերահսկողության և հետադարձ կապի մեխանիզմներ:

Երկրորդ գլխում քննարկվել և վերլուծվել են ուսուցիչների առցանց վերապատրաստումները՝ թե՛ հայաստանյան, թե՛ միջազգային հարթակներում: Ներկայացված են առցանց վերապատրաստումների էությունը, սկզբունքները, առանձնահատկությունները: Մանրամասն նկարագրվել են ՀՀ կրթական միջավայրում իրականացվող առցանց վերապատրաստումները, ինչպես նաև միջազգային փորձը: Ատենախոսն առանձնացրել է այն գործոնները, որոնք ազդում են հեռավար վերապատրաստումների որակի վրա, ինչպես նաև ներկայացրել է հարթակների ընտրության կարևորությունը՝ ըստ նպատակների: Վերլուծության են ենթարկվել մի շարք արտասահմանյան կազմակերպությունների վերապատրաստումներ, որոնցից մի քանիսը ներկայացված են աշխատանքի մեջ:

Երրորդ գլխում հեղինակն անդրադարձել է ուսուցիչների առցանց վերապատրաստման զարգացման միտումներին և ներկայացրել է գործընթացի արդի վիճակի վերլուծությունը: Այստեղ ամփոփված է իրականացված հետազոտության ընթացքն ու արդյունքների վերլուծությունը: Ընտրված մեթոդները հնարավորություն են տվել իրականացնել օբյեկտիվ հետազոտություն և լուծել առաջադրված գիտական խնդիրները: Վերլուծությունն իրականացվել է տրամաբանական և ճշգրիտ ձևով, իսկ եզրակացությունները լիովին համապատասխանում են նպատակներին:

Ատենախոսության մեջ առանձնակի կարևորություն ունի Ա. Դուրգարյանի կողմից մշակված վերապատրաստման ծրագիրը, որը համապատասխանում է

ժամանակակից կրթական ծրագրերի պահանջներին: Աշխատանքի տեսական ու գործնական մասերի համադրումը հանգեցրել է «Ուսուցիչների առցանց վերապատրաստման մանկավարժական մոդելի» մշակմանը, որը բաղկացած է հինգ հիմնական մասից: Մոդելը հիմնված է տեսական և գործնական ուսուցման համակցման, ինչպես նաև արդյունավետ հետադարձ կապի ապահովման վրա:

Ընդհանուր առմամբ, Ալեսա Դուրգարյանի ատենախոսությունը ամբողջական և հիմնավորված գիտական ուսումնասիրություն է՝ ունենալով ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Նշված նպատակներն ու խնդիրները լուծված են, վարկածը հաստատված է, իսկ եզրակացությունները գիտականորեն հիմնավորված են: Աշխատանքի արդյունքները կարող են կիրառվել ուսուցիչների հեռավար վերապատրաստումների կազմակերպման մեջ:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, իսկ հրապարակված աշխատանքներն արտացոլում են ուսումնասիրված խնդրի հիմնական դրույթները:

Դրական գնահատելով Ալեսա Դուրգարյանի ատենախոսությունը՝ ընդգծում ենք դրա արդիականությունը, նորույթը, տեսական և գործնական արժեքը, ինչպես նաև հեղինակի անձնական ներդրումը:

Ատենախոսությունը գրված է ակադեմիական ոճով, ամբողջ աշխատանքում առկա է գլուխների և ենթագլուխների տրամաբանական հաջորդականություն:

Միևնույն ժամանակ, առկա են մի շարք դիտարկումներ և առաջարկություններ, որոնք կարող են հետագայում լրացուցիչ հարստացնել աշխատանքը.

- Աշխատանքը կշահեր, եթե մանրամասն վերլուծվեին կոնկրետ առցանց հարթակներ, որոնք ապահովում են լիարժեք ուսումնական գործընթաց՝ հետադարձ կապի մեխանիզմներով:
- Վերապատրաստման նոր ծրագիրը կշահեր, եթե այն ներկայացվեր Դեյվիդ Կոլբի ուսուցման ցիկլի տրամաբանությամբ, հաշվի առնելով, որ այն նախատեսված է մեծահասակների համար:
- Աշխատանքը լրացուցիչ կշահեր, եթե ներկայացվեին և վերլուծվեին առցանց դասընթացների արդյունավետության գնահատման մեթոդաբանությունները, մասնավորապես՝ Կիրկփատրիկի, Գասքիի, TPACK և DigCompEdu մոդելները:

Վերոհիշյալ դիտարկումները չեն նվազեցնում կատարված աշխատանքի արժեքը: Ատենախոսությունը թեման արդիական է, ունի կիրառական նշանակություն և դրա արդյունքները կարող են ներդրվել մանկավարժական պրակտիկայում:

<u>Եզրակացություն.</u> *Ալեսա Միսակի Դուրգարյանի «Առցանց հարթակը որպես ուսուցիչների վերապատրաստման գործընթացի արդյունավետ միջոց» ատենախոսությունն ամբողջական հետազոտություն է և համապատասխանում է ԺԳ.00.01 մասնագիտության թեկնածուական ատենախոսությունների պահանջներին: Հեղինակը արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:*

Պաշտոնական ընդիմախոս

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Լ.Մ. Պողոսյան

16.11.2025 թ.

Ստորագրությունը
Հաստատում եմ
Գրասենյակի
Ամիսիոն
19/XI-2025թ